

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՄԱԼԵՔՅԱՆ ՄԵՀԻ ԴԵՐԵՆԻԿ ԿԱՐՈՅԻ

**ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՁԻՑ ՄԻՆՉԵՒ XX
ԴԱՐԻ ՄԿԻԶԲ**

**Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության սեղմագիր**

ԵՐԵՒԱՆ -2019

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության
ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ավագյան Ա.Գ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ներսիսյան Ա.Ա.

պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ Եղյան Մ.Ե.

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության
ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019 թ. ապրիլի
16-ին, ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ
ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝
0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019 թ. փետրվարի 26-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Մուրադյան Հ.Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ

ԳԻՏԱԿԱՆ

ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ

ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսության գիտական նշանակությունը կայանում է նրանում, որ ատենախոսության հիմնական թեման (Ատրպատականի հայություն XIX-XX դդ.) եւ առնչակից մյուս նյութերը կարող են օգտագործելի լինել հայ-իրանական պատմական առնչություններով զբաղվող հետազոտողների եւ հատկապես ցեղասպանագետների կողմից:

Իսկ թեմայի արդիականությունը բնութագրելի է նրանով, որ.

ա. այսօր եւեթ Ատրպատականը միեւնույն աշխարհագրաքաղաքական դիրքից ելած ընդունակ է իր շուրջ կուտակել այնպիսի ներուժ հնարավորություններ եւ կամ սպառնալիքներ, որոնք հնարավոր է Հայաստանի եւ հայության համար եւ՝ դրական, եւ՝ մասնավորապես բացասական գործոններով պայմանավորվեն: Քանզի փաստ է այսօր իսկ, որ իրանական Ատրպատականը, մերօրեա պան-թուրանական երազանքների թիրախային կիզակետում գտնվելով, շարունակում է ենթակա լինել թուրք-ադրբեջանական բացահայտ սադրանքներին, հար եւ նման նախորդ դարակզբին, երբ նույն Ատրպատականը թուրք-թաթարական նկրտումների ասպարեզն էր:

բ. Ա. Աշխարհամարտի ընթացքում նույն պան-թուրանական նպատակների զոհ դարձած Ատրպատականի հայության կոտորածների ու բռնագաղթի մասին համապարփակ ուսումնասիրություն ցայժմ չի կատարվել: Ուստի անհրաժեշտ է նկատվել տվյալ թեմայի խորքային հետազոտումը, հիմնված ի շարս այլ աղբյուրների, նաեւ մինչ օրս չբացահայտված փաստաթղթերի ու վկայությունների վրա:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊՍՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախոսության նպատակային կարեւորագույն նկատառումն է՝ Ատրպատականի հայության իրավիճակը՝ Ա. Աշխարհամարտի նախօրյակից մինչեւ Հայաստանի Անկախության միջեւ ընկած ժամանակահատվածը եւ հայկական աղբյուրներին զուգահեռ օգտագործվել է քիչ բացահայտված կամ չբացահայտված պարսկական աղբյուրների հիման վրա ապացուցել Օսմանյան Թուրքիայի հակաիրանական եւ հակահայկական նպատակադրումները թե՛ պան-թուրանական քաղաքականության իբրեւ արդյունք եւ թե՛ իր հայաջինջ քաղաքականության որպես մեկնակետ՝ Ատրպատականի հայության կոտորածի իրագործումը:

Իսկ թեմայի կարեւորագույն խնդիրներից է համարվել հիմնական սուբյեկտի՝ Ատրպատականի հայության աշխարհագրական կացությանը, ժողովրդագրական տեղաշարժերին եւ դարերի ընթացքում հասարակական ու քաղաքական առաջընթացը: Այնուհետեւ կարելորել է նույն սուբյեկտի ռազմավարական նշանակությունը, որը գրեթե հավասարապես հանդիսացել է

նպաստավոր ենթահող հայ ազգային կուսակցությունների ազատագրական պայքարի հոլովություն:

ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Նկատի ունենալով թեմայի համընդգրկուն բովանդակությունն ու ձեռնափային տարողությունը, անհրաժեշտ է նկատվել կիրառել պատմա-հասարակական խնդրո բոլոր հանգամանքների թե՛ նկարագրական, եւ թե՛ փաստա-վավերագրական մեթոդները:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել մինչ այժմ չբացահայտված, ընդորում իրանական պաշտոնական- պետական աղբյուրների օգտագործմանը:

ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԵՐԸ:

Ատենախոսությունում ներկայացվում է Ատրպատականի հայության դրությունը՝ XIX դարի վերջի եւ XX դարի սկզբի զարգացումների եւ իրադարձությունների լույսի ներքո: Ատենախոսության ժամանակագրական սահմաններն հիմնականում ընդգրկում են 20-րդ դարի սկզբի շրջադարձային թվականները, որոնք առհասարակ հայության եւ մասնավորապես Ատրպատականի հայության կյանքում բեկումնային դարձան: Սակայն միաժամանակ անհրաժեշտ է նկատվել թեմայի հիմնական սուբյեկտ՝ Ատրպատականի հայության հակիրճ պատմականը ներկայացնել՝ սկզբնավորումից մինչ 19- րդ դարաշրջան:

Բուն ժամանակահատվածի (20-րդ դարասկիզբ) ընտրությունը պայմանավորված է հետեյալ հանգամանքներով.

- Ատենախոսության մեջ բարձրացված խնդիրները 100 տարվա հեռավորությամբ հանդերձ, քիչ թե շատ խնդրո եւ մտահոգության առարկա են ներկա ժամանակաշրջանում, մասնավորապես օսմանական կայսրության ժառանգորդը հանդիսացող Թուրքիայի ներկա կառավարության տարածաշրջանային նկրտումների կտրվածքով:

- Նույն նկրտումների՝ թուրքական ծավալապաշտության թիրախային ներույժ սուբյեկտ է համարվում իրանական Ատրպատականը, որն անմիջական հարեւանության մեջ է վերանկախացած Հայաստանին:

ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ : Ատենախոսության մեջ համատեղված են պատմական միանգամայն չորս առանձնահատուկ իրադարձություններ, որոնք ճակատագրական նշանակություն են ունեցել Ատրպատականի հայության կյանքում: Իսկ որպես գիտական նորույթ կարելուրվել է այն իրողությունը, որով ապացուցվում է, թե Մեծ Եղեռնը սկիզբ է առել Ատրպատականի հայության կոտորածներով, մինչ բուն Ցեղասպանությունը՝ Արեւմտահայաստանում: Այս փաստի խոսուն վկան են հանդիսացել նաեւ պարսկական պաշտոնական վավերագրերը , զորօրինակ երբ օսմանական բանակի հրամանատար Խալիլ Բեյը Ատրպատականի հայության կոտորածների մասին (1914-15թթ.) գեկույց

էր ներկայացնում Վանի կուսակալ Ջեդէտին: Մի հանգամանք, որը կարող է ուշադրության առարկա դառնալ ցեղասպանագիտական հետազոտող շրջանակների համար: Իսկ ստենախոսության մեջ առաջին անգամը լինելով՝ շրջանառության մեջ են դրվել իրանական պաշտոնական բազմաթիվ աղբյուրներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Պատմահամեմատական հանգամանքը ի նկատի ունենալով՝ ստենախոսությունը կարող է կիրառական բնույթ կրել ցեղասպանագիտական եւ քաղաքագիտական շրջանակների հետազոտություններում, ինչպէս եւ՝ ուսումնակրթական ասպարեզներում:

Հետազոտման արդյունքները կարող են հունավորել, տվյալ դեպքում, ՀՀ դիվանագիտական ուղղվածությունը՝ թուրք-ադրբեջանական հակահայկական նորովի մարտահրավերները դիմագրավելու համար:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդում, քննարկվել էւ հրատարակային պաշտպանության է երաշխավորվել Պատմության ինստիտուտի Հայ գաղթօջախների և Սփյուռքի պատմության բաժնի կողմից: Ուսումնասիրության հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած հոդվածներում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Ատենախոսությունը գրվել է հայերեն, պարսկերեն, թուրքերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն եւ անգլերեն տարաբնույթ սկզբնաղբյուրների եւ ուսումնասիրությունների ու հատկապես պարսկերենով գրված արխիվային փաստաթղթերի եւ վավերագրերի հիման վրա: Ատենախոսությունը գրելիս օգտագործվել են իրանցի պատմագետների, իրանահայ պատմաբանասերների, Ատրպատականի Հայոց թեմի Առաջնորդարանի գրադարանի, Հայաստանի Ազգային արխիվի, հայ պատմաբանների եւ որոշ անհատական արխիվների վավերագրեր եւ փաստաթղթեր: Այս շարքում հատկապես կարեւորվել են Իրանի արտաքին գործերի նախարարության պատմության եւ արխիվային փաստաթղթերի հիմնարկի, ինչպես նաեւ իրանահայ պատմագետների վկայաբերությունները, որոնք օգնել են բացահայտելու թեմային վերաբերող ուշագրավ խնդիրներ եւ լուսաբանելու ցայժմ աղոտ մնացած որոշ հանգամանքներ:

Ատենախոսության աղբյուրագիտական բազան կազմում են Իրանի, Թուրքիայի, Հայաստանի, ՌԴ-ի արխիվներում պահվող արխիվային նյութերը: Ատենախոսությամբ հայ գիտական շրջանակներին են ներկայացվում Իրանի տարբեր արխիվներում պահպանվող Ատրպատականի հայության վերաբերյալ բազմաթիվ վավերագրեր եւ փաստաթղթեր: Այս վերջինները հատկապես մինչ այժմ անհասանելի են եղել Հայաստանի գիտական շրջանակներին:

Իրանական արխիվային նյութերից օգտագործվել են Իրանի արտաքին գործերի նախարարության եւ դիվանագիտության պատմության կենտրոնի փաստաթղթերը, որոնք առհասարակ լուսաբանում են սահմանադրական շարժումը (*գործրինակ՝ ռուս-անգլիական բանակցությունները 1907 թվականի համաձայնագրի մասին՝, կամ նորընտիր Մեջլիսում հայ եւ հրյա փոքրամասնությունների մանդատների որպիսության վերաբերյալ*)², ինչպես նաեւ 3-րդ եւ 4-րդ գլուխներում արծարծված թեմաները՝ կապված հայ ազատագրական պայքարի եւ մասնավորապես Ատրպատականի հայության կոտորածների վերաբերյալ, Ազգային փաստաթղթերի կազմակերպության արխիվի³, Իրանի Ազգային արխիվների կենտրոնի⁴, Իրանի Մեջլիսի արխիվի⁵, ինչպես նաև ՀՀ-ում ԻԻՀ-ի դեսպանատան մշակութային գրասենյակի արխիվի⁶ նյութերը: Իրանական արխիվային նյութերի մեծ մասը հայ պատմագրության մեջ նոր է գիտական շրջանառության մեջ դրվում և թույլ է տալիս ուսումնասիրել մի շարք կարևոր հանգամանքներ, ինչպես, օրինակ, հայ քաղաքական կուսակցությունների շփումները պարսկական իշխանությունների հետ, Ռուսաստանի հիւպատոսի դերակատարությունը Հյուսիսային Իրանում հայ ազգային գործիչների հետապնդման գործում:

Հայաստանի արխիվներից ուսումնասիրվել են Հայաստանի Ազգային արխիվի 50, 57, 227, 221 ֆոնդերում պահվող գործերը⁷, ինչպես նաև ՀՀ Մատենադարանի կաթողիկոսական դիվանի նյութերը⁸: Դրա հետ մեկտեղ Երվանդ Փամբուկյանը տրամադրել է մեզ Թավրիզում ՀՀԴ գործունեությունը լուսաբանող ՀՀԴ Բոստոնի արխիվի մեկ կարևոր փաստաթուղթ⁹, որի համար նրան հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը: Երկու փաստաթղթերը նույնպես առաջին անգամ են գիտական շրջանառության մեջ դրվում:

Օգտվել ենք նաև օսմանյան արխիվի փաստաթղթերից, որոնք վերաբերում են Պարսկաստանից Օսմանյան կայսրություն անցնող հայ հեղափոխական խմբերի ճանապարհներին և անձանց¹⁰:

Ատենախոսությունը գրելիս օգտագործվել են հայ ազգային-ազատագրական շարժման մասնակիցների հուշերն ու գրառումները: Դրանց

¹ اسناد وزارت خارجه، سنه 281، لندن، سفارت ایران، 1906، ص 167.

² اسناد وزارت خارجه، همان، ص 179.

³ سازمان اسناد ملی ایران، 1332-K66-p38-47.

⁴ آرشیو ملی ایران، ش. 293-22-5-7، گزارش ش. 151/296004، پرتوده ش. 431.

⁵ آرشیو مجلس ایران، سنه ش. 145، ص. 13.

⁶ آرشیو دفتر فرهنگی جمهوری اسلامی ایران در ایروان-ارمنستان.

⁷ ՀԱՍ, ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 127, ֆ. 57, գ. 5, գ. 10, 28, 29, 32, ֆ. 227, գ. 1, գ. 404, 424, ֆ. 221, գ. 1, գ. 21, ֆ. 4712, գ. 2, գ. 2:

⁸ ՀՀ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237, վավ. 323, թ. 87:

⁹ ՀՅԴ փաստաթղթերի արխիվ, նո. 484-86:

¹⁰ TC Basbakanlik Osmanli Arsivi - BOA, fon A. MKT. MHM, nr. 547/29, tarih 1321 M 20, s. 1; fon A. MKT. MHM, nr. 548/ 26, tarih 1322 Ra 28, s. 1-3.

թվում կարելու էն Ասլան Ստեփանյանի¹¹, Մալխասի¹², Խաչատուր Մինասյանի¹³, Ռուբեն Տեր-Մինասյանի¹⁴ եւ Միսնո Վրացյանի¹⁵ հուշերը, որտեղ լուսաբանվում են հայերի մասնակցությունն Իրանում տեղի ունեցող իրադարձություններին, Հյուսիսային Պարսկաստանի նշանակությունն արեւմտահայության ազատագրման գործի կազմակերպման տեսակետից: Առանձնահատուկ հարկ է նշել Ներսես արք. Մելիք Թանգյանին նվիրված հուշերի ժողովածուն¹⁶ և Ռուսաստանի դեսպանության պաշտօնյա Եվգենի Իլինի հուշերը¹⁷: Վերջինս ակնատես է եղել Իրանում ծավալվող սահմանադրական շարժմանը:

Ատենախոսությունում օգտագործվել են գիտական գրականություն եւ պարբերական մամուլ հայերեն, ռուսերեն, անգլերեն և պարսկերեն լեզուներով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, չորս գլուխներից, որոնք բաժանվում են ենթագլուխների, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների եւ գրականության ցանկից:

Ներածությունում ներկայացվում են ատենախոսության թեմայի արդիականությունը, նպատակներն ու խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական հիմքը եւ գիտական նորոյթը, թեմայի ժամանակագրական սահմանները, հիմնավորվում է աշխատանքի կիրառական նշանակությունը, տրվում է աղբյուրների եւ գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ «Ատրպատականի հայությունը՝ XIX դարի վերջից մինչև XX դարի սկիզբ » բաղկացած է չորս ենթագլուխներից՝ «Պատմական ակնարկ՝ Ատրպատականի հայության ծագման ու ձևավորման», «Թավրիզը՝ որպես Ատրպատականի թեմական, հասարակական եւ կրթամշակութային կենտրոն», «Ատրպատականի հայկական գավառների վիճակը եւ բնակչության տեղաշարժը» եւ «Հայ մամուլը Ատրպատականում XX դարի սկզբին»:

Առաջին ենթագլխում ներկայացվում են Ատրպատականի աշխարհագրական, պատմական դիրքը, որտեղ դարերից ի վեր հայությունը ապրել է որպես տեղաբնիկ: Ներկայացվել է նաեւ այդ պատմական նահանգում

¹¹ Ասլան Ստեփանեանի յուշերը, գրի առաւ Աճեմեան Հ., տպ. Թեհրան, 1966:

¹² Մալխաս, Ապրումներ, 1982:

¹³ Մինասեան Ի, Յուշեր, «Ալիք» ամսագիր, Բ տարի, 1962, թիւ 9, էջ 80:

¹⁴ Տեր-Մինասեան Ռ., *Հայ յեղափոխականի սր յիշատակները*, Բ հատոր, Երեւան, 1990, Շիրինեան Լ., Ռուբեն, Հայաստանի վերակերտումի ռազմավարութիւնը (Երկրաքաղաքական վերլուծութիւն), Երեւան, 2004:

¹⁵ Վրացեան Ս., Կեանքի ուղիներով. դէպքեր, դէմքեր, ապրումներ, հ. Բ, տպարան Սշակ, Պլյուս, 1960:

¹⁶ Յուշամատեան Տ. Ներսես Արք. Մելիք Թանգեանի, Թեհրան, «Ալիք» տպ.:

¹⁷ Իրանը՝ Սահմանադրութեան Յեղափոխութեան նախօրեակին, 1908, Մոսկուա, հեղ. Եւգենի Իլին (*ռուսական դեսպանութեան պաշտօնէայ*), պրսկ. թարգ. Լեւոն Բուդաղեան: Հրատարակութիւն Թեհրան, 2011 (պարսկ. 1390):

բազմահարյուր հոգեւոր կառույցների եւ եկեղեցիների առկայությունը, տեղի հայության բազմաթիվ անգամներ արտագաղթի ու տեղաշարժի երեւոյթը: Սույն ենթագլխում կարեւորվել է Ատրպատականի թեմերի ստեղծման եւ կենտրոնացման իրողությունները ինչպեսեւ նույն թեմի՝ հայկական իրականության մեջ ամենահինավուրցը լինելու հանգամանքները:

Երկրորդ ենթագլխում առանձին անդրադարձ է կատարվում Թավրիզին, որպես Ատրպատականի հայության կյանքում առանցքային նշանակություն ունեցող կենտրոնի ինչպես հոգեւոր ու հասարակական, այնպես էլ տնտեսական ու քաղաքական բնագավառներում: Մասնավորապես կարեւորվել է շրջանում հայ վաճառականության հաջողակ գործունեությունը, որը մեծ համբավ է բերել ամբողջ շրջանին: Տվյալ ենթագլխում, որպես կրթական կյանքի վառ ցուցանիշ անդրադարձ է կատարվել Թավրիզի «Արամյան» դպրոցի ուշագրավ գործունեությանը, որի երկարամյա գոյությունը արգասավորվել է թե՛ Ատրպատականի եւ թե՛ ողջ իրանահայության հաշվին հայեցի սերունդներ դաստիարակելու հանգամանքով: «Արամյան» կրթօջախում հայ աշակերտությունը կրթական որակից բացի ստացել է մշակութային այլ բնագավառների մեջ հմտանալու դաստիարակություն, ինչպիսին թատրոնն է եղել: Մյուս կողմից, որպես կարեւոր կրթօջախ, մեծ է եղել «Թեմական-կենտրոնական» դպրոցի դերը՝ Թավրիզում միմյանցից անջատ թաղամասերի դպրոցներում աշխատող հայ ազգային երկու կուսակցությունների՝ ՀՀԴ եւ ՄԴՀԿ-ի ուսուցչական միավորների միատեղման եւ համերաշխ աշխատելու գործում: Ենթագլխում բնականաբար մեծ տեղ է հատկացվել Թավրիզի, որպես Ատրպատականի հոգեւոր կենտրոնի, թեմական – եկեղեցական ու հարակից խնդիրներին, որոնցում ուշագրավ էւ առանձնահատուկ դերակատարություն են ունեցել հոգեւոր առաջնորդները, հանձինս Տ. Կարապետ եպսկ. Մկրտչյանի եւ Տ. Ներսես արք. Մելիք-Թանգյանի: Վերջիններս իրենց ազդեցիկ ու անձնվեր գործունեությամբ ոչ միայն հոգեւոր այլեւ հարկ եղած դեպքում քաղաքական ու հասարակական առումներով հաջողել են ի նպաստ Ատրպատականի հայության ապահովել նույնինքն պետական ու պաշտոնական շրջանակաների դրական դիրքորոշումները: Իսկ նմանատիպ պայմանների դեմ – հանդիման է կանգնել շրջանի հայությունը թե՛ Սահմանադրական շարժման զգայուն պահերին եւ թե՛ Ատրպատականի հայկական գյուղերի ու գավառների մշտական սպառնալիք համարվող թուրք-քրդական հրոսակների ոտնձգությունների ընթացքում: Որպես Ս. Էջմիածնի միաբանական թեմ, Ատրպատականի հոգեւոր առաջնորդները հաջողել են Ատրպատականում առկա դավանաբանական (նեստորական, կաթողիկե, բողոքական) ճնշումներից զերծ պահել հայոց եկեղեցու զավակներին, որոնք մշտապես գտնվում էին վերոգրյալների միախոներական միավորների թիրախում:

Ատրպատականի թեմի հոգեւոր առաջնորդների բազմաբեղուն գործունեության շուրջ 70-ամյա ժամանակաշրջանը (1850-1914) ամփոփելով՝

ենթագլխում առանձնահատուկ կարեւորությամբ արձանագրվել է արժեքավոր եւ փաստացի մի հանգամանք եւս. դեռեւս XIX դարի սկզբներից (1804) Ատրպատականի հոգեւոր առաջնորդները ու երեւելիները հանձինս Հրայր Աճառյանի, Հովսէփ Հովհաննիսյանի (Հ. Էլմար) եւ Հայկ Աճեմյանի հաջորդաբար մինչեւ XX դարի 70- ական թվականները ամենայն ջանադրությամբ Ս. Էջմիածին են վերադարձրել 1804 թվականին պարսկական բանակի կողմից թալանի ենթարկված Մայր Աթոռի հարուստ ձեռագրատունը, որով բազմահազար ձեռագիրներ Թավրիզի շուկաներում վաճառքի էին հանվում:

Ենթագլխում նույնպէս կարեւորվել է Ատրպատականում եւ նրա կենտրոն Թավրիզում ստեղծված մի շարք հասարակական կազմակերպությունների, բարեգործական ընկերությունների եւ միությունների հասարակօգուտ գործունեությունը, որը միախառնվելով «Արամյան» կրթօջախին կից թատերասերների, երաժշտասերների եւ ժողովրդական լսարանների աշխույժ գործունեությանը, համայնքին պարգեւում էր կենսունակություն:

Երրորդ ենթագլուխում Ատրպատականի կենտրոն Թավրիզից բացի անդրադարձ է կատարվել շրջանի հայկական բոլոր գավառների եւ գյուղերի վիճակին, առանձնաբար, հիմնականում ներկայացնելով տեղաբնիկ հայության գաղթն ու տեղաշարժը: Այս երեւոյթի հիմնական պատճառը թուրք (թուրքախոս ատրպատականցիներ) կեղեքող-հարստահարող «Մարփարաստների» (վերահսկիչներ) հարկահավաքման ծանրացուցիչ պայմաններն են եղել, որի արդյունքում հայ գյուղացիները դեպի Հայաստան, Կովկաս եւ Ռուսաստան էին գաղթում: Զորօրինակ՝ Ատրպատականի մյուս գավառների նման, Սալմաստից եւս մեծ թվով հայեր են գաղթել Արարատյան դաշտ դեռեւս 1828 թ.: XIX դարի վերջին, սակայն, երկու անգամ ավելացել է Սալմաստի հայ բնակչությունը՝ թուրքահայ գաղթականներով: Նախ, 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ այնտեղ հաստատվեցին մեծ թվով վասպուրականցի գաղթականներ: Ապա, 1895-96 թթ. Թուրքահայաստանի կոտորածներից հետո Սալմաստ ապաստանեցին շուրջ 3000 աղբակեցիներ, որոնց փոքր մասը հետագային վերադարձավ, իսկ մեծամասնությունը ցրվեց եւ մնաց Սալմաստի գյուղերում:

Հասարակական առումով Ատրպատականի գավառահայության իրավիճակը եւս նախանձելի չի եղել եւ շրջապատող թուրք- քուրդ խաժամուժի հետամնաց բարքերի ճնշման ներքո, ենթարկվել է ձուլման տարատեսակ պայմանների, ընդհուպ մինչեւ կրոնափոխություն: Իսկ այս վերջինը միակ ելքն էր հանդիսանում ծանրակշիռ հարկերից խուսափելու համար: Այս առնչությամբ հայ փոքրամասնության մասին դիպուկ է որպէս ակնատես Ե. Ֆրանգյանի բնութագիրը ըստ որի՝ այնտեղ, այսպէս ասած, ապրել են ոչ թէ հայեր, այլ քրիստոնյա թուրքեր եւ ավելացնում է, որ Եկեղեցական-կրոնական ծեսերի չկայացումը քահանա չլինելու պատճառով է եղել, իսկ դրանից բխող՝

կնունքի ու մկրտության կարգերի բացակայությունը, մեռելների օրերով անթաղ մնալը եւ այլ նման իրավիճակները, ավելի ազդեցիկ են դարձրել թուրք-քրդական մեծամասնությանը մերվելու հանգամանքը: Իսկ նման իրավիճակում քրդի ու թուրքի հետ խառն ամուսնությունները դառնում են անխուսափելի...: Ատրպատականի հայության գաղթի կարեւորագույն հիմնապատճառներից է համարել պարսիկ փորձագետ Բ. Խան Մոհամմադին 1828 թվականի ռուս-պարսկական Թուրքմենչայի պայմանագիրը, որի 14-րդ հոդվածի համաձայն պարսկահայերը պարտավորվեցին գաղթել Ռուսաստան: Այդ թվականներին Թավրիզից, Խոյից, Ուրմիայից, Մակվից եւ Սալմաստից 45. 000 հայեր ռուս գնդապետ Լազարովի գլխավորությամբ գաղթեցին Ռուսաստան: Ենթազխում մանրամասնորեն ներկայացված է Ատրպատականի հայկական գավառների մշակութային, կրթական եւ հոգեւոր կյանքի ձեւավորման ու կայացման հոլովոյթը, որում իրենց առանցքային դերն են ունեցել ինչպես թեմի առաջնորդները, այնպես էլ ազգային – հեղափոխական գործիչները, որոնք Թավրիզին եւ Ուրմիային զուգահեռ ուսուցչական եւ դաստիարակչական գործունեություն էին ծավալում տարբեր գավառներում:

Ենթագլխում առանձնաբար կարեւորվել է սահմանակից Սալմաստ գավառի եւ շրջակա գյուղերի աշխարհագրական դիրքը, որի մերձակայքում է տեղի ունեցել Վարդանանց պատերազմը, Խանասորի արշավանքը, հայ ազատագրական շարժումների ընթացքում Դերիկի վանքի հաճախակի կռիվները թուրքերի ու քրդերի դեմ, ինչպես նաեւ Դիլմանի ճակատամարտը, որն ավարտվեց Ջորավար Նազարբեկյանի եւ Անդրանիկի փայլուն հաղթանակով... իսկ բազմաթիվ ականատեսների նկարագրությունը փաստում է, որ Սալմաստը երկրի նախադուռն է եղել ու դեռ ավելին՝ շաղկապող օղակը՝ երկրի եւ արտասահմանի, որով էլ Վասպուրականի մեր հեղափոխական ամբողջ պատմությունը բնականորեն սկսվել է Սալմաստով: Եւ այդ է պատճառը, որ երկրի գրեթե բոլոր հեղափոխական գործիչները, թե՛ դաշնակցական, եւ թե՛ հնչակյան ու արմենական ծավալել են իրենց գործունեությունը սահմանի մյուս կողմում եւս:

Այսպես Ատրպատականի հայությունը այն, ինչ ունեցել են դարեր ու տասնյակ տարիներ առաջ, ժամանակի ընթացքում կորցրել են: Ամբողջ դարեր են եկել անցել այդ պատմական ժողովրդի պատկառելի ու նվիրական վայրերի, հիմնարկությունների, հարյուրավոր հրաշակերտների վրայով, թողել են իրենց հետքերը, սակայն մարդու անողորմ ձեռքը դիպել է այդ հիշատակներին, ավերել նրանց ու զրկել նախկին պայծառությունից: Բայց եւ այնպես էլի կանգուն են այդ դարավոր փառահեղությունները, հուշարձաններն ու հիշատակները:

Չորրորդ ենթագլուխը իր մեջ ներառում է Ատրպատականում գործունեություն ծավալած հայ մամուլի դերն ու նշանակությունը, որը հատկապես շրջադարձային ժամանակաշրջաններում առանցքային գործոն է եղել հասարակայնության մտքի ձեւավորման ու լուսավորման ինչպես նաեւ

մշակութային եւ ազգային քաղաքական կյանքի հարստացման եւ առաջընթացի գործում: Ենթազլխում կարելորվել է այն հանգամանքը, որ Ատրպատականի հայոց թեմը իրանահայ մամուլի բնօրրան է եղել:

Այնուհետեւ ենթազլխում ներկայացվել են Ատրպատականում լույս տեսնող մյուս պարբերականները, ինչպեսեւ առանձնահատուկ կերպով՝ կուսակցական եւ քաղաքական առաջին պաշտոնաթերթերը, որոնք իրենց հերթին լայնորեն լուսաբանել են ինչպես Իրանում ծայր առած Սահմանադրական շարժումը, այնպես էլ առհասարակ հայ ազատագրական պայքարի անցքերը, որոնց կիզակետն էր հանդիսանում նաեւ սահմանամերձ Ատրպատականը:

Ատենախոսության **երկրորդ գլուխը**՝ «Ատրպատականի հայությունը եւ հայ ազատագրական պայքարը» բաղկացած է չորս ենթագլուխներից:

Առաջին ենթազլխում՝ «Պարսկաստանի կարելորությունը հայ ազատագրական պայքարի համար» ներկայացվում է XIX-րդ դարի 80-ական թվականների նախակուսակցական ժամանակաշրջանը, որտեղ ազատագրական պայքարը կազմակերպելու եւ գլխավորելու նպատակով 1870–1880-ական թթ. ինչպես արեւելահայերի, այնպես էլ արեւմտահայերի մեջ ստեղծվում են գաղտնի խմբակներ, որոնք հող նախապատրաստեցին հեղափոխական–քաղաքական կուսակցությունների ստեղծման համար: Ենթազլխում փորձ է արվել մեկնաբանելու Պարսկաստանի ռազմավարական նշանակության կարելորությունը, որը գրեթե հավասարապես խնդրո առանցքային առարկա է հանդիսացել հայ ազգային կուսակցությունների (*Արմենական, Մ.Գ. Հնչակյան եւ Հ.Հ. Դաշնակցություն*) ազատագրական պայքարի ծրագրային, մարտավարական ու նպատակային դրույթներում: Դա հիմնականում վերաբերում էր Պարսկաստանի՝ որպես տարանցիկ, համեմատաբար առավել ազատորեն դեպի արեւմտահայոց շրջաններ երթեւեկելու զենք ու զինամթերք, ինչպեսեւ գրականություն, թերթեր ու մարդուժ տեղափոխելու առումով, քան կարող էր իրականանալ անմիջական ռուս-թուրքական սահմանանցմամբ, որը հաճախ ավարտվում էր ի վնաս հայկական զինատար-մարտական խմբերի: Եվ իզուր չէ, որ եռյակ կուսակցությունների հիմնադրման հենց սկզբնական քայլերում պարսկական վերոգրյալ գործոնը հանդիսացել է օրակարգային խնդիր: Մյուս կողմից՝ XIX դարի վերջին Պարսկաստանի Ատրպատական նահանգի հասարակական-քաղաքական համեմատական բարենպաստ պայմանները եւ թէ՛ առհասարակ աշխարհագրական դիրքը ստեղծում էին դրական ենթահող հայ ազգային-ազատագրական շարժման համար, որն իր անմիջական արձագանքն է ունեցել Պարսկաստանի Ատրպատականի շրջանում իր Դավրեժով, Հեր եւ Զարեհանդ գավառներով, «Նախադուռն ու Խարխուխը» հանդիսանալով դեպի Երկիր Թուրքահայաստան տանող ճանապարհների: Իսկ այդ քաղաքները աշխարհագրական առումով մոտ եւ նպատակահարմար էին Արեւմտյան

Հայաստանի հետ կապ հաստատելու տեսանկյունից: Ընդհանուր այս խորապատկերի ներքո, ահա, ենթազվիտում ներկայացվել են հայ ազգային երեք կուսակցությունների գործունեությունը Ատրպատականում՝ հայ ազատագրական պայքարի հոլովություն: Ենթազվիտում խիստ կարեւորվել է Պարսկաստանի իշխանությունների վերապահ եւ ինչոր տեղ հայամետ կեցվածքը հայկական կուսակցությունների գործունեության եւ հատկապես Ատրպատականից դեպի արեւմտյան Հայաստան երթեւեկող զինյալ խմբերի հանդեպ: Ինչպես նշում է հայ հեղափոխական եւ քաղաքական գործիչ Ռուբեն Տեր Մինասյանը. «... Եթե կա երկիր մը, որ ջերմապես կը բաղձար հայ ժողովուրդի ազատագրման, Պարսկաստանն է այդ: Այնտեղ էր, որ անարգել կը պատսպարվեին հայ ազատագրության միտքն ու ույժը»:

Որպես հակաքայլ, ինչպես միշտ՝ Օսմանյան իշխանությունները փորձում էին վերահսկողություն հաստատել սահմանի երկայնքով, բայց գիտակցելով, որ դա հնարավոր չէ, հիմնական ուշադրությունն ուղղում էին Պարսկաստանում հայ ազգային կուսակցությունների գործունեության վերահսկմանը և հայ ջոկատների տեղաշարժերի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման գործին: Այսպես, 1903 թ. Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարարություն ուղարկված նամակներից մեկում նշվում էր. «Ռուսաստանում և Իրանում գտնվող հայ կոմիտեականները Մակվի, Մալմաստի, Բզդիբի և Կադզվանի շրջաններում հավաքվելով, միջոցներ են ձեռնարկում անցնելու սահմանը»¹⁸:

Օսմանյան արխիվի մեկ այլ փաստաթղթում, որը վերաբերում է 1904 թ., հրահանգներ են տրվում «միջոցներ ձեռնարկել Իրանի սահմանին կուտակված հայ հրոսակախմբերի դեմ»¹⁹: Միաժամանակ տեղական իշխանություններին հրահանգվում էր միջոցներ ձեռնարկել հետապնդելու «դաշնակցական և հնչակյան կոմիտեների անդամներ Թորոս Գյուլբենկյանին և աստամնարույժ Հայկ Գիբրիսյանին»²⁰:

Հատկանշելի է, որ օսմանյան իշխանությունների հրապարակվող տեղեկությունները հաճախակիորեն չափազանցված էին ներկայացվում իրանական իշխանություններին, որոնք էլ վերջիններիս կողմից հերքման էին ենթարկվում: Ձորօրինակ, օսմանցիների այն տեղեկությունները, որոնց համաձայն Ռուսաստանից հայկական ջոկատները ներթափանցել են Ատրպատականի սահման եւ միացել Խոյի եւ Մալմաստի հայ ֆիդայիներին: Նման չափազանցությունների հերքման գործում մշտապես նախանձախնդիր է եղել նույնիսկ թագաժառանգը եւ համապատասխան հրահանգներով նախարարապետ Մոշիր օլ դոլէին կարգադրում էր, որպեսզի հերքման նամակներ հղի օսմանական դեսպանությանը: Այդ հերքումների շարանում

¹⁸ BOA, fond A. MKT. MHM, dosya 547, gomlek 29, tarih 1321 M 20, s. 1.

¹⁹ BOA, fond A. MKT. MHM, dosya 548, gomlek 26, tarih 1322 Ra 28, s. 1-3.

²⁰ Նույն տեղում, էջ 3:

կարելի է նկատել Ատրպատական նահանգի գործակալական խորհրդի համապատասխան հերքման նամակն առ այն, որով բացառվում էր հայ ֆիդայիների հարձակումը Խոյի ու Սալմաստի օսմանական «շահբանդարի» (*մաքսապետ*) վրա:

Ուշագրավ է իրանական իշխանությունների վերոգրյալ հերքումների առնչությամբ օսմանական դեսպանատան զայրույթը՝ դա բնութագրելով որպես Իրանի իշխանությունների կողմից վերապահություն հայ ֆիդայիների նկատմամբ, որոնք, ըստ թուրքերի, մտադիր են եղել ներթափանցել օսմանական տարածքներ:

Երկրորդ ենթագլխում Հայ ազգային առաջնեկ՝ Արմենական կուսակցության գործունեության վերաբերյալ առանցքային նշանակություն է տրվել հայ ազատագրական պայքարի նախակարապետներ Գոլոշյանի եւ Ագրիպայանի զոհողություններին ինչպեսեւ «Արմենիա»-ի հրատարակիչ եւ Արմենական կուսակցության գաղափարական հիմնադիր Մկրտիչ Փորտուզայանի ազդեցիկ դերակատարությանը: Գոլոշյանի եւ Ագրիպայանի մահով, սակայն, առաջին զոհաբերությունն էր, որ անում էր գաղափարական հայությունն ազատության սեղանին: Այդ դեպքն իր ժամանակին մեծ իրարանցում առաջ բերեց կովկասահայ երիտասարդության մեջ: Բերնե բերան անցնում էր լուրը, եւ յուրաքանչյուրն իր տրամադրությունները կամ զգացմունքներն էր կապում այդ տխուր պատմության հետ: Սակայն ընդհանուր տպավորությունն այն էր, որ Գոլոշյանի եւ Ագրիպայանի ճանապարհն էր շիտակը, եւ այդ ուղիով պետք է ընթանար հայությունը: Իսկ Արմենական կուսակցության հիմնադիր սերունդի ներկայացուցիչ Մկրտիչ Աւետիսյանի մահով «*մահամերձ կը դառնար նաեւ արմենականությունը*»²¹: Ենթագլխում Արմենական կուսակցության գործունեությունը Պարսկաստանում ամփոփվել է հետեւեալ կերպ. արմենականները թեպետ երկարատեւ գործունեություն չձավալեցին, սակայն որպես հայկական կուսակցականության առաջին փորձառություն, անհրաժեշտ ենթահող ու հիմք ստեղծեցին ավելի կազմակերպված եւ համեմատաբար ավելի երկարակյաց Հնչակյան կուսակցության համար:

Երրորդ ենթագլուխը նվիրված է Հնչակյան կուսակցության գործունեությանը Պարսկաստանում, որը ինչպես Արմենականների դեպքում, ՄՂԿԿ-ի ծրագրային դրույթներում եւս համարվում էր կազմակերպական բջիջներ ձեւավորելու եւ դեպի Վասպուրական զինատար խմբեր գործուղելու նպատակային ռազմավարական հենակայան: «*... Կովկասում կուսակցության նպատակն էր,- գրում է Արսեն Կիրուրը,- խմբեր կազմել եւ առաքել Արեւմտյան Հայաստան՝ Պարսկաստանով*»: Ինչպես վկայում են Հնչակյան բազմաթիվ

²¹ Տէր-Մինասեան Ռ., *Հայ յեղափոխականի մը յիշատակները*, Բ հատոր, Երեւան, 1990, էջ 106:

արխիվներ, սույն կուսակցության առաջին կազմակերպական հիմքերը դրվել են Պարսկաստանում 1891-1892 թթ. եւ սկզբնական շրջանում, որպես կազմակերպիչ-քարոզիչներ Թավրիզից Սալմաստ են եկել Հակոբ Մեղավոյանը, Ղուկաս Մալենցյանը, Գ. Չիլինկիրյանը, իսկ հետագային էլ՝ Փարամզը, Մարոն եւ ուրիշներ: 1903-ին Թավրիզում «Արամյան» դպրոցի տեսչությունն է ստանձնել կուսակցության հիմնադիրներից մեկը՝ Ռուբեն Խանազատը, իր կողքին որպես ուսուցիչ ունենալով Ատրպետին (Մարգիս Մուրահաջյան): Իրենց կազմակերպչական տաղանդով ու բարոյական ուժեղ անհատականությամբ, 1890-ականներին Սալմաստում զինական-հեղափոխական գործին մեծ նպաստ են բերել Հնչակյան գործիչներ Փարամազը եւ Յուլակ սարկավազը:

Ենթազլխում կարեւորվել է Հնչակյանների, մասնավորապես Սալմաստում 1914 թվականների գործունեությունը, որը նշանավորվում է հայ-ասորական բարեկամական ու համագործակցական հանգամանքով: Մասնավորապես 1903 թվականին Սալմաստից Հնչակյան Տոնոյի խումբը շուրջ 30 հոգով օգնության է հասել ասորական Մավանա գյուղին եւ դիրքեր գրավելով՝ հարձակվել քրդերի վրա վերջիններիս փախուստի մատնելով: Ուշագրավ է նաեւ այն հանգամանքը, որ մինչեւ 1914-ի Ա աշխարհամարտ Հնչակյան կուսակցությունը Պարսկաստանում կենտրոնանում է քարոզչական գործունեության վրա՝ շփվելով պարսիկ հեղափոխականների հետ: Թարգմանության հանձնելով կուսակցության ծրագիրը պարսկերենի, հնչակյանները որոշում են հիմնել առաջին պարսիկ Սոց.Դեմոկրատ կուսակցությունը՝ «Պարսկաստանի Սոց. Դեմոկրատական խմբակցություն» անունով: Դա տեղի է ունենում 1911 թ. հունվարին Էնզելիում կայացած խառը ժողովի ընթացքում: Ատրպատականում Հնչակյան կուսակցության պաշտոնաթերթն է եղել՝ «Զանգ» պարբերաթերթը, որը լայն տարածում է գտել ամբողջ Պարսկաստանում, որպես առաջին սոցիալիստական, հառաջադիմական թերթ: Հնչակյան կուսակցության գործունեությունը Պարսկաստանում դադարել է՝ ցարական գործերի միջոցով Պարսկաստանի հին ռեժիմը հաստատելուց հետո:

Չորրորդ ենթազլխում ներկայացվել է արմենականներին ու հնչակյաններին հաջորդող ՀՀԴ-ի գործունեությունը Պարսկաստանում, որը նույնպես այդ կուսակցության համար հանդիսացել է որպես հայ ազատագրական պայքարի «Նախադուռ» եւ «խարիսխ»: Պարսկաստանը, ահա, այն երրորդ ուղղությունն էր, որում ամբողջ հասակով մխրձվելու՝ աշխարհաքաղաքական ու հատկապես գաղափարական-ծրագրային հիմքեր ունէր ՀՀԴ-ն: Ուշագրավ է նաեւ, որ Ատրպատականում ՀՀԴ-ի հաստատվելու առաջին քայլերի նախաձեռնողն ու հիմնական կազմակերպիչը Ստեփան Զօրյանն էր (*Ռոստոմը*): Վերջինս կեղծ փաստաթղթերով մի քանի անգամ անցել է Պարսկաստան, ուսումնասիրել ապագա գործունեության թատերաբեմը եւ

համապատասխան առաջարկություններ ներկայացրել Հայ Հեղափոխականների Դաշնակցության նորաստեղծ կենտրոնին:

«ՀՀԴ հիմնադրությունից հետո,- գրում է Մ. Վարանդյանը,- առաջին ուժեղ կազմակերպությունն ստեղծվել է Թիֆլիսում, ապա՝ Բաքվում, ուր կային ստվար թվով մտավորականներ եւ նյութական առատ միջոցներ: Բաքվից է, որ առաջին գործիչները 1890 թվականին եկել են Թավրիզ: Մալմաստ անցնող գործիչների մեծագույն մասը նախ Կովկասից Թավրիզ էր գալիս, ապա մեկնում իր գործունեության վայրը: 1890 թ. զինական գործով Թավրիզ է գալիս Տիգրան Ստեփանյանը, ապա Պարսկաստան են անցնում Գրիգոր Միրզաբեգյանը (Մածուն Խեչո, հետագայում մասնակից նաեւ Եփրեմի հետ պարսկական հեղափոխական կռիվներին) եւ Արամայիսը, որոնք անցնում են Վասպուրական՝ սահմանների մոտ»:

Բնականաբար, եթե չլիներ հայ բնակչության գործուն աջակցությունը, ապա հեղափոխական կազմակերպությունները չէին կարողանա ամրապնդվել գավառում եւ կապեր հաստատել Երկրի հետ: «... Թավրիզը վերին հսկողն էր Մալմաստի եւ Խոյի շրջաններու վրա,- գրում է Ռուբեն Տեր Մինասյանը,- որոնք կեղոռն կը հանդիսանային Ատրպատականի կենդանի գործունեության: Այդտեղ կուսակցությունը միայն մշակութային ու բարոյական նշանակություն չունէր»: Ենթագիտում կարելուրվել է ՀՀԴ զինագործական աշխատանքը, երբ հենց 1890 թվականին Թավրիզում հիմնվում է «*Խարիսիս*» զինագործարանը, Ռոստոմի (Ստեփան Զորյան) մասնակցությամբ: Թեեւ ՀՀԴ-ն Երկրի հետ հաղորդակցվելու համար ուներ նաեւ Կարսի եւ Բագրեւանդի գծերը, բայց ռուսական հսկողությունը սահմանների վրա խիստ լինելով, նախապատվությունը տրվում էր ընդհանրապես Ատրպատականին: 1900-ական թվականներին Գիլանն ու Մազանդարանն էլ կապվեցին Ատրպատականի շրջանին, Բաքու-Էնզելի-Ռաշտ գծով զենքերի փոխադրության եւ ընդհանրապես Կովկասի հետ կապ պահելու գործերում: Թավրիզը, Մալմաստը, Մակուն, Խոյը, Ռաշտը եւ այլ վայրեր ամբողջ երկու տասնամյակ ապաստան դարձան ՀՀԴ ընտրյալ գործիչների եւ հայրուկների համար, որոնք իրենց առավելագույն ճիգերը զոհաբերեցին վատ պահելու համար միշտ հեղափոխության կրակը Արեւմտյան Հայաստանում: ՀՀԴ-ի ստեղծման առաջին տարին իսկ թուրք եւ պարսիկ սահմանագլխի Դուշմանա ձորում գտնվող Դերիկի կիսավեր վանքը ընտրվեց որպես հեղափոխականների կենտրոն: Ատրպատականում ՀՀԴ գործունեության կարելուրությունը նշանավորվել է նրանով, որ Թավրիզում Ընդհանուր ժողովի որոշմամբ հաստատվել է Բյուրոյի նստավայր: Պարսկաստանում ՀՀԴ գործունեության ծիրում առանցքային իր նշանակությամբ կարելուր իրադարձություն է համարվում 1897 թվականին քրդական մագրիկցիների դեմ Խանասորի արշավանքը, որն էլ ակունք էր առել Ատրպատականից: ՀՀԴ -ն Ատրպատականում սկսյալ 1903 թվականից, իր աշխատանքների կենտրոնն է դարձրել Խոյն ու Մակուն եւ առանձնապես Թադեոս Առաքյալի վանքը

(Մենավոր): Դաշնակցության Ատրպատականյան գործունեության ծիրում Ուրմիան եւս իր աշխարհագրական դիրքով, շատ նպատակահարմար էր Երկրի հետ կապ պահելու, հարաբերվելու տեսակետից: Թեեւ Մալմաստից, Ադրակի վրայով, կապ էր հաստատված Երկրի հետ, այդուհանդերձ այդ ճամբան, ինչպես երեւում է ՀՀԴ մարմինների գործունեությունից, չէր բավարարում գործի պահանջները, մանավանդ որ Դերիկի կործանումից հետո Խոյն ու Թաղոս Առաքելի վանքը իրենց վրա էին կրում Երկրի հետ կապի ամբողջ բեռն ու պատասխանատվությունը: Այս պատճառով հասկանալի պետք է համարել ՀՀԴ Արեւելյան Բյուրոյի եւ Թավրիզի Կ.Կոմիտեի փորձերը՝ կապի նոր ճամբա հաստատելու Ուրմիայից Մարգեավար, Թարգեավարի եւ քրդական Շամստինան շրջանների վրայով Վասպուրականի հետ, որն էլ կարող էր հաստատվել միմիայն քրդերի հետ համաձայնության գալով եւ համագործակցելով:

Երրորդ գլուխը՝ «Պարսկաստանի Սահմանադրական հեղափոխությունը եւ Ատրպատականի հայությունը» բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլուխը՝ «Սահմանադրական շարժումը Պարսկաստանում» ներկայացվել էն Իրանի Սահմանադրական հեղափոխության պատճառահետեւանքային հանգամանքները, շարժման փուլային հասունացման ժամանակագրությունը, ներքին թե արտաքին գործոնների ազդեցությունը եւ դերակատարությունը՝ ապստամբությանը համաժողովրդական կերպարանք հաղորդելու առումներով: Ենթագլուխում լայն քննության առարկա է դարձել Մոզաֆֆարեդդին եւ հատկապես նրան հաջորդող Մոհամմադ Ալի Շահի տարատեսակ դավադրությունները, օգտագործելով ինչպես ներքին կղերական հետադեմ տարրերի, այնպես էլ արտաքին ուժերի Անգլիայի եւ Ռուսաստանի հակասահմանադրական հակումները:

Երկրորդ ենթագլուխը՝ «Հայ ազգային կուսակցությունների մասնակցությունը Իրանի Սահմանադրական շարժմանը» վերաբերող թեմայում, խորքային ուսումնասիրություն է կատարվել, պայմանավորված՝ նույն շարժմանը Հնչակյան եւ Դաշնակցություն կուսակցությունների ծանրակշիռ մասնակցությամբ, որը քաղաքական օրինաչափ հանգամանք լինելով գերազանցորեն բխում էր այդ կուսակցությունների ծրագրային ու գաղափարական դրույթներից: Պետք է ընդգծել նաեւ, որ շարժմանը հայերի՝ մասնակցություն բերելու առաջնային ջատագովները պարսիկ ազատախոհ հեղափոխականներն էին, որոնք հաջողության գրավական էին համարում ազատագրական պայքարի քուրայում թրծված հայ հեղափոխականներին: Վերջիններս ինչպես մարտական, այնպես էլ գաղափարա-քաղաքական խթան հանդիսացան պարսիկ ազատախոհական շարժման ձեւավորման գործում՝ հաղթական ավարտ ապահովելով Սահմանադրական առաջադեմ շարժմանը: Ենթագլուխում ընդգծված կերպով կարելուով է Իրանի Սահմանադրական շարժմանը երկու հայ ազգային կուսակցությունների համատեղ գործակցության

իրողությունը՝ որպես ընդհանուր նպատակի իրագործման երաշխիք: Դեռևս 1907 թվականի մարտին «Համերաշխության հրավեր» վերտառությամբ համատեղ կոչով հանդես են եկել ՀՀԴ Արեւելյան Բյուրոն և Հնչակյան ՄԴ կուսակցության Ռուսաստանի և Կովկասի Պատգամավորական ժողովը, որով հայտարարում էին, թե. «...կազմել են իրենց միջից մի լիազոր մարմին՝ մշակելու միջոցներ, մի անգամ ընդմիջտ վերջ տալու միջկուսակցական անմիտ թշնամական հարաբերություններին և եղբայրասպանություններին: Այդ մարմնի անմիջական գործնական քայլը կը լինի ուղարկել գավառները իր լիազոր անդամներին և ներկայացուցիչներին՝ քննելու և լուծելու առկախ մնացած բոլոր խնդիրները, որ պատճառ են դառնում վերոնշյալ թշնամություններին:

Լիահույս լինելով, որ այդ ընդհարումների կործանիչ և հեղափոխության շահերին միանգամայն հակառակ լինելը գիտակցվում է բոլորի կողմից, կոչ ենք անում մեր բոլոր մարմիններին և ընկերներին անմիջապես դադարեցնել որևէ թշնամական գործողություն և ամեն ջանք ի գործ դնել հուզված մտքերը խաղաղեցնելու համար»²²:

«Պատմություն ՄԴ Հնչակյան կուսակցության» ժողովածուն հետևյալ կերպ է բնութագրում կուսակցության մասնակցությունը Պարսկաստանի հեղափոխական շարժմանը. «Հնչակյան կուսակցությունը պարսկական Սահմանադրական շարժումներու ժամանակ կը բերե գործուն մասնակցություն, ըլլայ Ատրպատականի, ըլլայ Թեհրանի ճակատներուն վրա: 1908-ին Թավրիզի մեջ ժողովրդական հերոս մը, Սաթթար խան, կանցնի հեղափոխական շարժման գլուխը և կը կազմե կամավորական խումբեր: Սաթթար խանին կը պակսեր զենք և հեղափոխական փորձառություն: Այդ առթիվ անոր օգնության կը հասնին հնչակյան և դաշնակցական տեղական մարմինները: Դաշնակցությունը Կովկասէն և Թուրքիայէն կը բերե զինվորներու փոքրաթիվ խումբ մը՝ Քեռիի գլխավորությամբ»²³: Հայկական երկու կուսակցությունները, սակայն, իրենց կազմակերպական և զինական – քարոզական կարողությամբ առանձնաբար ևս սատար են հանդիսացել շարժմանը հաղթանակ ապահովելու գործում:

Երրորդ ենթագլուխը՝ «Եփրեմը և Սահմանադրական շարժումը» թեմայում առանձնակի քննարկման առարկա է եղել շարժմանն իր վճռորոշ և առանցքային դերակատարություն ունեցող «Պարսկաստանի Գարիբալդի»-ի կոչմանն արժանացած՝ գանձակեցի Եփրեմ Դավթյանը:

Ենթագլխում նոր լույս է սփռվել այն թյուր կարծիքների վրա, որոնց համաձայն՝ Սահմանադրության հայազգի հերոս Եփրեմ Դավթյանը իբր գործել է անձնակենտրոն մղումներից ելած ու հակադրվել ՀՀԴ ղեկավարությանը:

²² «Դրօշակ», 17-րդ տարի, 1907, համար 3(181), էջ 41:

²³ Պատմություն ՄԴ Հնչակեան կուս., նշլ. աշխ., էջ 398:

«... Դաշնակցության եւ՝ մասնակցությունը Իրանի Սահմանադրական շարժման, եւ՝ խզումը նրանից»,- գրում է ազգային-քաղաքական գործիչ, պատմագետ Խ. Տ. Գրիգորյանը,- պատահական եւ տարերային բնույթ չունեին, երկու պարագային էլ ՀՀ Դաշնակցության կամքը արտահայտված ենք գտնում մարմինների եւ ժողովների որոշումներում, եւ պայմանավորված չեն անհատներով: Նրանք բխում էին ծրագրային անհրաժեշտությունից եւ ունեին գաղափարական հիմնավորում»²⁴:

Չորրորդ գլուխը՝ «Ա. Աշխարհամարտը, թուրք- օսմանցիները ներխուժումը Ատրպատական, հայկական կոտորածները եւ հայության բռնազաղթը (1914-1918 թթ.)» բաղկացած է չորս ենթագլուխներից:

Առաջին ենթագլուխում՝ «Ռազմական գործողությունները Իրանի հյուսիսում եւ քրիստոնյա բնակչության (հայերի եւ ասորիների) կոտորածները 1914-1916 թթ. » ուշադրություն է սեւեռվել Ատրպատականի շրջան թուրք-օսմանական բանակի պարբերական ոտնձգություններին եւ դա այն դեպքում, երբ Ա. Աշխարհամարտի ընթացքում Իրանը թեկուզ սկզբից չէզոքություն էր որդեգրել, բայց եւ այնպես պատերազմում հակամարտող ճամբարների նկրտումների կիզակետը հանդիսանալով՝ ծանրագույն գին վճարելու հարկադրանքի առջեւ կանգնեց: Թե՛ գերմանա-թուրքական եւ թե՛ անգլո-ռուսական ռազմաքաղաքական հակադիր քաղաքականությունների զոհ դառնալով՝ ի չիք էր դառնում Պարսկաստանի կողմից որդեգրված չէզոքությունը եւ առաջին հերթին Թուրքիայի կողմից տարածքային ներխուժումների դեմ հանդիման էր կանգնեցնում առանց այդ էլ թույլ կառավարությամբ տառապող երկրին:

Ենթագլխում նույնպես կարելորվել է այն հանգամանքը, որ Ատրպատականի ճակատում ռուսական բանակի ներխուժումներն առավել եւս միտում են ունեցել չէզոքացնելու գերմանա-թուրքական ծավալապաշտական նկրտումները, իսկ թուրքական ոտնձգությունները, զավթողական բնույթ կրելով, միտում ունեին պանթուրանական երազանքի իրագործումը՝ պատրվակելով իրանական Ատրպատականում թրքախոս ազգաբնակչության առկայությունը: Իսկ այդ երազանքի իրականացումը խոչընդոտող գործոնը, բնականաբար, սահմանամերձ Ատրպատականի հայությունն էր, որը հայ ազատագրական պայքարի կարեւոր կռվաններից մեկն էր:

Ենթագլխում անհրաժեշտություն է համարվել վկայաբերելու 1914-1916 թթ. ընթացքում ականատեսների նկարագրականները՝ մասնավորաբար գաղթական եւ կոտորածի ենթարկվող Ատրպատականի հայ գյուղացիության աղետալի վիճակի մասին: Սույն ենթագլխում նաեւ կարեւորությամբ անդրադարձ է կատարվել իրանահայ պատմագետ- հետազոտող Անդրէ Ամուրեանի

²⁴ Տ. Գրիգորեան Խ., ՀՀ Դաշնակցութեան եւ պարսկ. Սահմանադրութեան այլասերած դեկավարութեան միջեւ գործակցութեան խզումը, Աթենք, 2001, էջ 32:

վաւերագրական փաստարկներին, որոնք հիմնված են եղել կրկին ականատես՝ Թավրիզի ֆրանսիական միսիոնարության պետ Հայր Պ. Ֆրանսէնի խիստ արժեքավոր վկայությունների վրա, որոնք օրը օրին արձանագրվել են Ֆրանսիացի, հոլանդացի եւ իսպանացի ականատեսների կողմից: Վերոգրյալները հիմք են ծառայել սույն ենթագլխում ընդգծելու, որ Մեծ եղեռնը ոչ թէ արեւմտահայերի, այլ արեւելահայերի եւ ի մասնավորի պարսկահայերի ջարդերով է սկսվել, ավելի հիմնավոր եւ համոզիչ դարձնելով հայ պատմագիտության մեջ ցայժմ հպանցիկ անդրադարձումները: Ենթագլխում վերոնշյալ փաստարկի շեշտավորման հիմք են հանդիսացել հատկապես իրանական պաշտոնական աղբյուրների վավերագրերը :

Երկրորդ ենթագլխում՝ «*Ատրպատականի հայության մասնակցությունը ռազմական գործողություններին 1914-1918 թթ.*», ներկայացվել է հայ կամավորական ջոկատների կազմավորման հանգամանքները եւ մասնավորապես կարեւորվել Ջոր. Անդրանիկի հրամանատարությամբ Ատրպատականի ճակատում Առաջին գնդի զինական գործողությունները:

Ենթագլխում օգտագործվել է Ջոր. Անդրանիկի կամավորական գնդի վաշտապետ, ռազմական գործողությունների մասնակից – ականատես Ասլան Ստեփանյանի ուշագրավ հուշերը, մասնավորապես Դիլմանի ճակատամարտի մասին: Գալով Ատրպատականի հայության ուղղակի մասնակցությանը ռազմական գործողություններին, որոնք ընթանում էին զինական ջոկատների վերակազմակերպման ու մարտական նոր խմբերի կազմության ուղղությամբ, վկայաբերվել է հետևյալ իրողությունը. « 1917-ին, երբ ռուսական զորքը «*հեղափոխականացած*» թողեց գրավված վայրերի հետ եւ Ուրմիան,- գրում է Սասունցին,- *ՀՀ Դաշնակցության կոմիտեն կանգնեց ժողովրդի կողքին: Նրա նախաձեռնությամբ գումարված ներկայացուցչական ժողովում, քննության դրվեց երկու առաջարկ. 1) մեկնել ռուսների հետ, ինչպես պնդում էին փոքրաթիվ հարուստները. 2) մնալ երկրում, բոլոր միջոցները ձեռք առնել վայելելու պարսիկ կառավարության պաշտպանությունը, իսկ նրա անգործության դեպքում՝ դիմել ինքնապաշտպանության, ապրել կամ մեռնել պատվավոր կերպով: Երկար խորհրդակցությունից հետո ժողովը միաձայն ընդունեց երկրորդ առաջարկը»²⁵:*

Ատրպատականի հայության ինքնապաշտպանական մղումներից ելած զինական պատրաստությունները, ավելի ուշ՝ 1918 թ. գարնանը նպաստում են նրա հերոսական դիմադրությունների հաջողությանը՝ ընդդեմ Ալի Բհսան փաշայի ոտնձգությունների, դրանց հետ մեկտեղ կանխելով թուրքական զորքի առաջխաղացքը դեպի Կովկաս:

Երրորդ ենթագլուխը՝ «*Ներսես Արք. Մելիք Թանգյանը եւ հայ գաղթականները*», ուշադրություն է հրավիրել Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Ներսես Արք. Մելիք Թանգյանի դերակատարությանը՝

²⁵ «Դրօշակ», 1932, լույսար, հ. 1, մէջբերած Սասունցիի «Մեր գոհերը» յօդածից, էջ 191:

գաղթականությանը օգնելու գործում, որի ջանքերի շնորհիվ թե՛ Վասպուրականի եւ արեւմտյան Հայաստանի այլ վայրերից Ատրպատական գաղթած եւ թե՛ բուն Ատրպատականի հայ բնակչությունը կարողացան փրկվել նորանոր կոտորածներից: Այս հարցում մեծ է եղել թեմակալ առաջնորդի դերը՝ պարսկական իշխանությունների կողմից հայանպաստ դիրքորոշումների ապահովման գործում:

Չորրորդ ենթագլխում՝ «Ատրպատականի հայության կոտորածն ու բռնագաղթը (1917–18 թթ.)» կարելուր շեշտադրումը վերաբերում է 1918 թվականին թուրքական բանակի հերթական անգամ Ատրպատական ներխուժման նպատակներին, որոնց կիզակետում էր գտնվում նաեւ Ատրպատականի հայության բնաջնջումը: Եւ այսպես, վերջին ենթագլուխը ամփոփվում է հիմնական երկու հանգամանքի հաստատմամբ, ըստ հետեւալի.

ա. Իրանահայությունը ու հատկապես Ատրպատականի հայությունը 1917–18 թվականների ընթացքում մարդկային ու նյութական ծանր գին վճարեցին թուրքական մոլոխին՝ բազմահազար կորուստներով, գաղթականներով ու թեմի թուլացման հաշվին քանակական կոտորակումներով: Այս կապակցությամբ հատկանշելի է 1918 թ. հուլիսին Ալի Բիսան փաշայի խոստովանությունը (*Ջուլֆայի ճամբի վրա դիմավորող պետական ու հասարակական խավերի, ինչպեսէ թավրիզահայ համայնքի ներկայացուցիչների առջեւ ունեցած իր ճառում*) Խոյի եւ այլ շրջանների հայաբնակ գյուղերի կոտորածների մասին, որտեղ նա ուղղակիորեն հայտարարել է. «... **Որ ինքը հրամայել է կոտորել Խոյի, Մակուի հայերին...**, բայց ոչ միայն Խոյի եւ Մակուի, այլեւ Ս. Թաղէի վանք ապաստանած 83 հայերին, Ղարադաղի Դզմարի շրջանի հայկական հինգ գյուղերի բնակիչներին ...»²⁶:

բ. Միաժամանակ ինչպես նախկինում հայկական կամավորական ջոկատների խրախուսիչ եւ օժանդակող ներկայությունը, այդ թվականներին եւս, հայ-ասորական միացյալ զորախմբերի կազմությունը, խթան հանդիսացավ, որպեսզի նույն կոտորակված հայն իր մեջ ուժ գտնի եւ կամարտահայտություն դրսևորի՝ փառահեղ գոյամարտ տանելու Ուրմիայի եւ Սալմաստի ճակատներում: Դա ինքնին խոչընդոտեց օսմանական ոսոխի առաջխաղացումը դեպի Սարդարապատի եւ Բաշ Ապարանի ճակատներ, ու այդպիսով իրանահայն իր անհերքելի դրոշմը թողեց հայկական ազատամարտի պատմության էջերում: «... 1918թ. գարնան Ուրմիայի հերոսամարտի մասին, - ինչպես բնութագրում է Ա.Ամուրյանը, - դժբախտաբար քիչ բան է գրված: Նրա կարևորությունը, սակայն, շատ մեծ է հետեւալ նկատառումներով.

²⁶ Ամուրեան Ա., Ատրպատականի հայութեան վիճակը թրքական բանակների ներխուժման օրերին էջ 18:

1. թրքական արշավող բանակի աջ թեւի հառաջխաղացումը դանդաղում է ամիսներ շարունակ (*առնվազն 5-6 ամիս*), որը կատարվում էր պարսկական Ատրպատականի վրայով:

2. Այդ դանդաղեցումը հնարավորություն է տալիս Արարատյան դաշտի Երեւանի հայության ինքնապաշտպանության միջոցների դիմել, որը արդյունավորվեց Սարդարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսեի հերոսամարտերով:

3. Թյուրքը չկարողացավ հասնել իր նպատակին՝ ջարդել գլխովին Սալմաստ-Ուրմիայի հայությանը:

Ահա այս երեք գլխավոր պարագաներն են, որ պատմականորեն արժեւորում են Ուրմիայի հերոսամարտը եւ նշում այն նպաստը, որ Պարսկաստանի հայությունը ընծայել է Հայ դատին»²⁷: *Եւ իզուր չէ, որ Ալի Բհսան փաշան հետագային խոստովանել է. «Եթէ չլինէին հայերը, մենք կը գրավէինք Կովկասը»*²⁸:

Ամփոփելով աշխատանքի ընդհանրացումներն ու դրույթները կարելի է հանգել հետեւյալ եզրակացությունների.

- Ատրպատականի հայությունը հնագույն ժամանակներից ի վեր համարվել է տեղաբնիկ ժողովուրդ, իսկ հաջորդական դարերի ընթացքում, պայմանավորված ինչպես տեղական, այնպես էլ արտաքին ռազմաքաղաքական տարբեր ազդակներով, հաճախակի կոտորակումների ու տեղաշարժերի ենթակա է դարձել:

- Որպես հայկական հիմնավորց թեւ 1247 թ.՝ հիմնադրությունից ի վեր, ղեկավարվել է հոգեւոր առաջնորդների կողմից: Վերջիններս ջանք չեն խնայել՝ հայկական բոլոր գավառներում ապահովելու սոցիալ-տնտեսական, կրթական ու մշակութային նախնական կարիքները, ի հեճուկս շրջապատող ավատապետական կարգերի տակ գալարվող ու ֆեոդալական հեղձուցիչ մթնոլորտում ապրող թուրք, քուրդ եւ պարսիկ հետամնաց հասարակայնության, որոնց տարաբնույթ այլասերիչ բարքերը մշտապես զգալի են եղել քանակապես նրանց զիջող հայկական խավերի մեջ:

- Ատրպատականի հայությունը հետագա ժամանակաշրջաններում, հատկապես XIX դարի կեսից հետո կրթամշակութային վերելք է ապրել շնորհիվ դեռեւս 1835 թվականին հիմնադրված «Ներսիսյան» եւ ապա 1875 թվականից անվանափոխված «Արամյան» դպրոցի, որտեղ որպես ուսուցիչներ սերունդներ են դաստիարակել անվանի հայագետ-մտավորականներ ի դեմս Հրաչյա Աճառյանի, վիպասան Բաճճիի եւ ազգային-հեղափոխական հանրահայտ գործիչների:

²⁷ Ամուրեան Ա., Ատրպատականի հայութեան վիճակը թրքական բանակների ներխուժման օրերին, էջ 21:

²⁸ Յուշամատեան Մեծ Եղեռնի, էջ 30 (*տե՛ս Պողոսեան Սոս., նշւ. աշխ., 2-րդ հատոր, էջ 343*):

- Ատրպատականի հայոց թեմը իրանահայ մամուլի բնօրրան է. XX դարի հենց սկզբից՝ 1903 թվականին, հրատարակել է իրանահայ մամուլի առաջնեկ «Գործ» շաբաթաթերթը: Հետագային Ատրպատականում հայ մամուլն իր անվոխարհիների դերակատարությունն է ունեցել հասարակայնությանը լուսավորելու գործում՝ բարձրացնելով վերջինիս ազգային-մշակութային, հասարակական եւ մանավանդ քաղաքական գիտակցության մակարդակը:

- Որպես Հայոց աշխարհին սահմանակից աշխարհագրաքաղաքական մի հնոց՝ Ատրպատականը XIX դարի վերջին ու հատկապես XX դարի սկզբին հանդիսացել է հայ ազատագրական պայքարի միջնաբերդ, ռազմաքաղաքական խարխիս ու տարանցիկ անվտանգ ուղի, որպես այլընտրանք ռուս-թուրքական անապահով սահմանի: Հայ ազգային երեք կուսակցությունները հիմնադրման սկզբից եւեթ իրենց գործունեության եւ պայքարի ռազմավարական դաշտն են ընտրել Ատրպատականի հայկական սահմանակից գյուղերն ու ավանները դեպի Երկիր փոխադրելով ազատագրական համընդհանուր պայքարի զինական անմիջական կարիքները:

- Պարսկաստանի Սահմանադրական շարժմանը Հնչակյան եւ Դաշնակցություն կուսակցությունների ծանրակշիռ մասնակցություն ունենալու դրդապատճառը քաղաքական օրինաչափ հանգամանք էր եւ գերազանցորեն բխում էր այդ կուսակցությունների ծրագրային ու գաղափարական դրոյթներից: Պետք է ընդգծել նաեւ, որ շարժմանը հայերի՝ մասնակցություն բերելու առաջնային ջատագովները պարսիկ ազատախոհ հեղափոխականներն էին, որոնք հաջողության գրավական էին համարում ազատագրական պայքարի քուրայում թրծված հայ հեղափոխականներին: Վերջիններս ինչպես մարտական, այնպես էլ գաղափարա-քաղաքական խթան հանդիսացան պարսիկ ազատախոհական շարժման ձեւավորման գործում՝ հաղթական ավարտ ապահովելով Սահմանադրական առաջադեմ շարժմանը:

- Ատրպատականի շրջանում բնակվող ասորական մեծաթիվ բնակչության առկայությունը եւ ռուսական իշխանությունների կողմից վերջիններիս հովանավորվելն՝ ընդդեմ թուրք-քրդական հալածանքների նպաստել են հետագային հայ-ասորական համագործակցության ձեւավորմանը՝ հարկ եղած դեպքում համատեղ զինակցությանը: Դա արտահայտվել է ինչպես 1914–15, այնպես էլ 1918 թվականների ինքնապաշտպանական գոյամարտերում:

- Ա. Աշխարհամարտի ընթացքում Իրանը թեկուզ սկզբից չեզոքություն էր որդեգրել, բայց եւ այնպես պատերազմում հակամարտող ճամբարների նկրտումների կիզակետը հանդիսանալով՝ ծանրագույն գին վճարելու հարկադրանքի առջեւ կանգնեց: Թե՛ գերմանա-թուրքական եւ թե՛ անգլո-ռուսական ռազմաքաղաքական հակադիր քաղաքականությունների զոհ դառնալով՝ ի չիք էր դառնում Պարսկաստանի կողմից որդեգրված չեզոքությունը եւ առաջին հերթին Թուրքիայի կողմից տարածքային ներխուժումների դեմ

հանդիման էր կանգնեցնում առանց այդ էլ թույլ կառավարությամբ տառապող երկրին:

- Ատրպատականի ճակատում էթե ռուսական բանակի ներխուժումներն առավել էւս միտում ունեին չեզոքացնելու գերմանա-թուրքական ծավալապաշտական նկրտումները, ապա թուրքական ոսնձգությունները, զավթողական բնույթ կրելով, միտում ունեին պանթուրանական երազանքի իրագործումը՝ պատրվակելով իրանական Ատրպատականում թրքախոս ազգաբնակչության առկայությունը: Իսկ այդ երազանքի իրականացումը խոչընդոտող գործոնը, բնականաբար, սահմանամերձ Ատրպատականի հայությունն էր, որը հայ ազատագրական պայքարի կարեւոր կովաններից մեկն էր:

- 1914–1918 թթ. ընթացքում բազմիցս Ատրպատականի շրջան ներխուժած օսմանական զորքերը կոտորածի են եկթարկել հայ էւ ստրի բնակչությանը: Սույն կոտորածների մասին, ի շարս առկա անհերքելի ապացույցների էւ փաստերի, որոնք հրապարակվել են հայերեն, անգլերեն, գերմաներեն, թուրքերեն էւ... տարաբնույթ աղբյուրներում, գոյություն ունեն մանավանդ պարսկերեն մինչ օրս չհրապարակված պաշտոնական վավերագրեր ու փաստաթղթեր, որոնք ապացուցում են, որ Ատրպատականի հայության կոտորածները մեկնակետ են հանդիսացել Հայոց Մեծ եղեռնի համար:

- Գաղթականությանն օգնելու գործում մեծ է եղել Ներսես Արք. Մելիք Թանգյանի դերը, որի ջանքերի շնորհիվ Վասպուրականի և Արեւմտյան Հայաստանի այլ վայրերի բնակչության բեկորները կարողացան փրկվել և նոր ապաստան գտնել:

- Եւ վերջապէս, իրանահայությունն ու հատկապէս Ատրպատականի հայությունը 1917–18 թվականների ընթացքում մարդկային ու նյութական ծանր գին վճարեցին թուրքական մոլոխին՝ բազմահազար կորուստներով, գաղթականներով ու թեմի թուլացման հաշվին քանակական կոտորակումներով: Բայց էւ միաժամանակ ինչպէս նախկինում հայկական կամավորական ջոկատների խրախուսիչ էւ օժանդակող ներկայությունը, այդ թվականներին էւս, հայ-ստրական միացյալ զորախմբերի կազմությունը, խթան հանդիսացավ, որպէսզի նույն կոտորակված հայն իր մեջ ույժ գտնի էւ կամարտահայտություն դրսեւորի՝ փառահեղ գոյամարտ տանելու Ուրմիայի էւ Սալմաստի ճակատներում: Դա ինքնին խոչընդոտեց օսմանական ոսոխի առաջխաղացումը դէպի Սարդարապատի էւ Բաշ Ապարանի ճակատներ, ու այդպիսով իրանահայն իր անհերքելի դրոշմը թողեց հայկական ազատամարտի պատմության էջերում:

Ատենախօսության հիմնական բովանդակությունն արտահայտված է հեղինակի հետևյալ հոդվածներում.

1. Թավրիզի Արամյան (Ներսիսյան) ազգային դպրոցը, Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, ՊՐԱԿ 1, 2017, էջ 86–89:
2. XX դարասկզբի իրանահայ մամուլը (համառոտ ակնարկ), Բանբեր հայագիտության, 2017, հ.1 (13), էջ148- 157:
3. Ատրպատականի հայկական գավառների իրավիճակը եւ բնակչության տեղաշարժը 20-րդ դարի սկզբին, «Կանթեղ» գիտական հոդվածներ, 2017, հ.4 (73), էջ141-148:
4. Ատրպատականի հայոց առաջնորդ Տ. Ներսես արք. Մելիք–Թանգյանի գործունեությունը 1914-18 թթ, 21-րդ դար, 2017, հ. 2(72), էջ 112-123:
5. Ատրպատականի հայությունը եւ հայ ազատագրական պայքարը /հոդված/, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2016, հ. 39, էջ 183-191:
6. Հյուսիսային Իրանում քրիստոնյա բնակչության (հայերի եւ ասորիների) կոտորածները 1914-1916 թթ., Յեղասպանագիտական հանդես, 2017, հ. 5(1), էջ78-92:
7. Ա Աշխարհամարտը, Իրանը եւ թուրքական նկրտումները Ատրպատականում, 21-րդ դար, 2017, հ. 6 (76), էջ 138-151:

MALEKYAN MEHR DERENIK KARO

THE ARMENIANS OF ATRPATAKAN BEGINNING FROM THE END OF THE XIX CENTURY TO THE ENTRY OF THE XX CENTURY

Dissertation for degree of Doctor of Science (History), on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The defense of the dissertation will be held on April 16, 2019, 14⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SCC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Avenue 24/4).

SUMMARY

The thesis presents the situation of the Armenians of Atrpatakan in the light of developments and events taken place at the end of the XIX century and at the beginning of the XX century. The chronological boundaries of the thesis mainly include the turning points of the beginning of the XX century, which became critical in the lives of Armenians in general, and particularly, in the lives of Armenians of Atrpatakan.

The thesis consists of introduction, four chapters which are divided into subchapters, summary, list of used sources and literature.

The thesis presents actualness of the topic and its goals and objectives, the methodological basis and academic novelty of the study, chronological boundaries of the topic, justifies the practical significance of the study, gives the theory of sources and literature.

The first chapter – "The Armenians of Atrpatakan at the end of the XIX century to the beginning of the XX century" consists of four subchapters: they are -" Historical survey on origin and formation of the Atrpatakan Armenians", " Tavrıs as a diocesan, public, educational and cultural center", "Situation of Armenian provinces of Atrpatakan and movement of the population" and "Armenian print media in Atrpatakan at the beginning of the XX century".

The second chapter of the thesis – " The Armenians in Atrpatakan and Armenian liberation struggle", consists of four subchapters.

The third chapter – "Constitutional revolution in Iran and the Armenians of Atrpatakan ", consists of three subchapters.

The fourth chapter – "The First World War, invasion of Ottoman forces, Armenian massacres and deportation of Armenians (1914-1918)", consists of four subchapters.

The practical significance of the thesis lies in the fact that taking into consideration the comparative historical issue, the thesis can be used in genocide and political studies as well as in the educational field.

Summarizing the general points of the study one can come to the following conclusion:

- At the end of the XIX century and, especially, at the beginning of the XX century, Atrpatakan as a geopolitical area adjacent to Armenia was the citadel of Armenian liberation struggle, it was a military-political anchor and transit route as an alternative to the Russian-Turkish insecure border.
- The driving motive of Hunchakian and Dashnaksutiun parties to take part in the constitutional movement of Iran was politically predictable and was mainly derived from the ideological provisions of these parties.
- During the period lasted from 1914 to 1918, Ottoman forces, which continually invaded Atrpatakan, exterminated Armenian and Assyrian population. In addition to the undeniable evidence and facts that have been published in Armenian, English, German, Turkish and many other sources, there are still official documents in Persian that have not been published yet. These documents prove that the massacres of Armenians of Atrpatakan were the starting point for the Armenian Genocide.
- Finally, the Armenians of Iran and especially the Armenians of Atrpatakan paid a massive human and material price during the massacres of 1917 -1918 accomplished by the Turkish warriors. The Armenians had thousands of losses, a great number of emigrants brought to the weakening of the diocese. But at the same time, as it had occurred previously, the presence of encouraging and supporting volunteer troops, the formation of Armenian-Assyrian united forces promoted the Armenians to find willpower and to fight in the fronts of Urmia and Salmast. This in itself hindered the advancement of the Ottoman forces to the fronts of Sardarapat and Bash Aparan. Thus the Armenians of Iran left their undeniable trace in the history of Armenian liberation war.

МАЛЕКЯН МЕГР ДЕРЕНИК КАРОВИЧ

АРМЯНЕ АТРПАТАКАНА С НАЧАЛА XIX ДО КОНЦА XX ВЕКОВ

Диссертация на соискание ученой степени кандидата биологических наук по специальности 07.00.01 “История Армении”

Защита состоится 16-го апреля 2019 г., в 14⁰⁰ на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории Национальной академии наук РА (0019, Ереван, проспект Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

В диссертации представлена состояние атрапатаканских армян в свете развития событий конца 19-го и начала 20-го веков. Хронологические границы диссертации в основном включают поворотные моменты начала 20-го века, которые стали поворотным пунктом в жизни армян и в частности, атрапатаканских армян.

Диссертация состоит из введения, четырех глав, которые разделены на подглавы, выводов и списка используемых источников и литературы.

В введении представлена актуальность темы диссертации, цели и задачи, методологическая основа работы и научная новизна, хронологические границы темы, обосновано практическое значение работы, дана теория источников и литературы.

Первая глава – “Атрапатаканские армяне с конца XIX века до начала XX веков” состоит из четырех подглав: “Исторический обзор происхождения и формирования атрапатаканских армян”, “Тавриз, как епархиальный, общественный и образовательно-культурный центр Атрапатакан”, “Положение армянских провинций Атрапатакан и перемещения населения” и “Армянская пресса в Атрапатакане в начале XX века”.

Вторая глава диссертации – “Атрапатаканские армяне и армянская освободительная борьба” состоит из четырех подглав.

Третья глава – “Конституционная революция Персии и армяне Атрапатакан” состоит из трех подглав.

Четвертая глава – “Первая мировая война; турецко-османское вторжение в Атрапатакан; резня и депортация армян (1914-1918 гг.)” состоит из четырех подглав.

Практическая значимость диссертации заключается в том, что, учитывая историко-сравнительное обстоятельство диссертация может быть применена в

исследованиях геноцидных и политических дисциплин, а также в области образования.

Подводя итог обобщений и положений, можно сделать следующие выводы:

В качестве геополитической границы примыкающий к армянскому миру, Атрпатакан в конце XIX , и особенно в начале 20-го века, был цитаделью армянской освободительной борьбы, военно-политическим якорем и транзитным маршрутом в качестве альтернативы российско-турецкой небезопасной границы.

Мотивация партий “Гнчакян” и “Дашнакцутюн” принять участие в конституционном движении Персии была политическим явлением и вытекала из программных и идеологических положений этих партии.

В течение 1914-1918 гг. османские войска неоднократно вторгались в Атрпатаканскую область, убивали армянское и ассирийское население. В дополнение к неопровержимым доказательствам и фактам, которые были опубликованы на армянском, английском, немецком, турецком и многих других источниках, имеются официальные еще не опубликованные документы на персидском языке, которые доказывают что массовые убийства армян Атрпатакана стали отправной точкой для Геноцида армян.

Наконец, армяне Ирана и особенно армяне Атрапатакан заплатили огромную человеческую и материальную цену турецкому войну в 1917-18 годах, тысячами жертв, эмигрантов и за счет ослабления епархии количественными нарушениями. Но в то же время, как и раньше поощрение и поддержка армянских добровольческих отрядов в те годы тоже состав армянско-ассирийских совместных войск был стимулом, чтоб тот же сломленный армянин стремился выразить свою волю возглавить славные битвы на фронтах Урмии и Салмаста. Это само по себе препятствовало продвижению османских противников на фронты Сардарапата и Баша Апарана, и, таким образом иранский армянин оставил свой неоспоримый штамп в истории армянской освободительной войны.